ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Մինչև այստեղ մեզ հետաքրքրել են Զանգեզուրի նյութական և հասարակական կուլտուրայի երևույթները։ Ոչ պակաս հնագույն ապրումների հետքերն են համառ պահվել նաև գավառի գաղափարախոսության մեջ, որի նկարագրությանն այժմ անցնում եմ։ Նախ և առաջ խոսքս կլինի ժողովրդական տոների և նրանց հետ շաղկապված սովորությունների մասին, որոնց մեջ առանձնապես ցայտուն կերպով դրսևորվում է հասարակորեն հագեցված աշխարհըմբռնումը։

Ինչպես այլ քրիստոնեական երկրներում, այնպես նաև Հայաստանում, մասնավորապես և Զանգեզուրում քրիստոնեական մտայնությունն անզոր է եղել ազատագրվելու նախորդ հեթանոսական հասկացողություններից և մասամբ ինքն է նրանցից բխել, մասամբ էլ խիստ ազդվել է նրանց կողմից և ձևափոխվել։ Քրիստոնեական եկեղեցին ինչքան էլ ձգտել է բացարձակ պայքար մղել այդ նախկին հեթանոսական հասկացողությունների դեմ, այնուամենայնիվ հարկադրված է եղել ոչ միայն հաշտվել նրանցից մի մասի հետ, այլև իր ըմբռնումների հաղթանակն ապահովելու համար որդեգրել է նրանց։ Քրիստոնեությունը տվել է հին բովանդակությանը նոր անուն և նոր մեկնաբանություն, որի տակից, սակայն, հեթանոսական աստառը շատ ցցուն կերպով երևան է գալիս։ Մի կողմից պայքարելով, իսկ մյուս կողմից հարմարեցնելով քրիստոնեական տոները ժողովրդի սովոր և հարազատ հեթանոսական տոնակատարություններին՝ քրիստոնեական եկեղեցին հնարավորություն է տվել նրանց շարունակելու իրենց զարգացման անընդհատ պրոցեսը։ Հայկական ժողովրդական տոների ուսումնասիրողի առաջ դրված է մի կարևոր խնդիր՝ այդ քրիստոնեական ծածկի տակ հայտնաբերել տակավին կենդանի մնացած հին մտածողության խախտված ամբողջականությունը և դրանով լույս սփռել հայկական հոգևոր կուլտուրայի սաղմնավորման և հաջորդող զարգացման այնպիսի հինավուրց փուլի վրա, որին համապատասխան հասարակական և նյութական կյանքի պայմաններն արդեն վաղուց ենթարկվել են խիստ ձևափոխության։

Հայկական կուլտուրայի աղբյուրների ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների մեջ շատ տարածված և գրեթե անվիճելի է ճանաչված այն կարծիքը, որ հայկական հեթանոսական մտաշխարհն ըստ ամենայնի հագեցված է իրանական-զրադաշտական փոխառություններով։ Այդ եզրակացությունը հիմնավորվում է նրանով, որ հայ ժողովրդի աստվածները կրում են Արամազդ, Միհր, Անահիտ և այլ իրանական անունները, որ Հայաստանում տարածված էին հրեշտակ, դև, մոգ, ատրուշան և այլ նման իրանական կրոնա-